# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանում տեղի ունեցած հանրային լսում «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ

25.12.2024թ Գարգառ բնակավայր

ՕՐԱԿԱՐԳ: Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսում:

Հանրային լսմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Գոհար Մինասյանը, Լոռու Մարզի Գյուլագարակ համայնքի համայնքապետ Խաչիկ Վարդանյանը, Գարգառ բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Աղաջանյանը, Գյուլագարակ համայնքի ավագանու անդամ Դավիթ Մուրադյանը, «Շին-Կոմֆորտ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ ճարտարապետ Դավիթ Բաբայանը, Տարոն Հայրապետյանը և Մանկապարտեզի տնօրեն Լիլյա Շահինյանը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով 2024թ. դեկտեմբերի 25-ին ժամը 14:00-ին Լոռու մարզի Գյուլագարակի համայնքապետարանում տեղի ունեցավ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքի Գարգառ բնակավայրում նախատեսվող կրթահամալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Գոհար Մինասյանը, ով հանդես եկավ բացման խոսքով ներկայացրեց փորձաքննական գործընթացը և կատարված աշխատանքները:

Ներկայացվեց, որ համաձայն Օրենքի նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և տարբեր գերատեսչություններին կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ եղել են առաջարկություններ և դիտողություններ, որոնց հիման վրա հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին լրամշակման: